



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39



57
p. 1038

150

2002


Մ. Երանյան Թիֆլիս 5-ր. 2

ԱՌԱՋՆՈՐԴ
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ
Կ Ա Մ
ՏԱՐԵՐՔ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՄԻՄՈՆ ՉԻՍՄԼԻՔՅԱՆ
Թղթակից-Ուսանող Բարիգի Առեւտրական
գործնական վարժարանին
(Ecole Pratique de commerce de Paris)

Ծ Ր Ա Գ Ի Ր

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տանկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր գիտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ պանքայի ճաշիւներ եւ այլն.



Հասր Ա. — Տեսր Ա.—ԺԲ.




Կ. ՊՈՒԻՍ
ՏՊԱԳՐՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
—
1901

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ


ԸՆԴԱՐՁԱԿ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ



[Մեր աշխատակից Ա. Գ. Էֆէնտի, որ գործի կեանքն ուսումնասիրած է 20 տարիէ ի վեր, հաճեցաւ, մեր խընդրանքով, « Առաջնորդ Վաճառականաց »-ի համար պատրաստել Թուրքիոյ Առեւտրական եւ Տնտեսական Աշխարհագրութիւնը՝ ամենաճոխ ծրագրով եւ ուղեցոյց ունենալով Վիթալ Բինէի, Ալի Ճէվատ պէյի ընդարձակ գործերը, տասնէ աւելի Գերմանական եւ Անգլիական նորագոյն հրատարակութիւններ, Օսմանեան վաճառականութեան վրայ պարբերաբար հրատարակուած հիւպատոսական տեղեկագրեր, Վիլալիքներու պաշտօնական վիճակացոյցեր եւ Մաքսային Վերատեսչութեան ու Հանրային Պարտուց Վարչութեան տարեկան տեղեկագրերը Թուրքիոյ մայրաքաղաքին, նահանգներուն, գաւառներուն, գաւառակներուն եւ մինչեւ իսկ կարեւոր գիւղախումբերուն առեւտրական, վարչական ու արտեսական կացութեան վրայ իր ամիոփ, ստոյգ եւ նորագոյն ծանօթութիւններովը, Ա. Գ. Էֆէնտիի աշխատասիրութիւնը — իր տեսակին մէջ առաջին —, պիտի կրնայ օգտակար ըլլալ ամէն գործի մարդու, որպէս՝ մանաւանդ՝ ամէն ուսանողի]:



Ե Ր Կ Ո Ւ Ի Ս Օ Ս Ք

Արհեստ մը, ո՛րչափ ալ պարզ ու դիւրին ըլլայ, անկարելի է գործել, առանց նախապէս սովորած ըլլալու զայն:

Վաճառականութիւնն ալ արհեստ մ'է — խիստ դժուար —, և ունի իրեն յատուկ օրէնքներն ու կանոնները, զորս կրնանք սովորիլ գիտութեամբ կամ փորձառութեամբ:

Վաճառականութիւնը վաճառքներու փոխանակութեան արհեստն է, միմիայն շահու մը նպատակով եղած: Ամէն վաճառական անպատճառ շահու մը նպատակով գործի կը ձեռնարկէ, բայց շատ անգամ կը վնասէ: Արդ, այս վնասէն կարելի եղածին չափ դերձ մնալու համար, վաճառականը, գործի չձեռնարկած, պէտք է սովորած ըլլայ փոխանակելի վաճառաց յատկութիւնն ու արժէքը, պատրաստութեան գաղտնիքն ու եղանակը, արտադրութեան եւ սպառման տեղերը, փոխանակութեան օրէնքներն ու միջոցները, ու դեռ շատ բաներ զորս կրնանք սովորիլ դպրոցի մէջ առեւտրական գիտութեանց տեսական ուսմամբ և շուկայի մէջ՝ գործնական փորձառութեամբ:

Ժամանակ մը, երբ ամէն մարդ իր երկրին մէջ կ'առնէր կը ծախէր, երբ ո՛չ ինք օտար երկիր կ'երթար յաճախորդ կամ գործ փնտռելու, ո՛չ ալ օտարն իր երկիրը կուգար շահն իր ձեռքէն խելու, երբ դեռ մրցումն ինչ է չէին գիտեր եւ գործերն ընկալեալ սովորութեանց համաձայն կ'ընթանային, այն ատեն պէտք չկար Առեւտրական Գիտութիւն ուսնելու: Քիչ կամ շատ փորձառութիւն բաւական էր: Բայց երբ մի կողմէ մեքենական ու քիմիական գիտութիւնները ապրանքներու պատրաստութեան եղանակները փոխեցին, և միւս կողմէ շոգեհաւ ու շոգեկառք ճամբաները կարճեցուցին ու հաղորդակցութիւնները դիւրացուցին, հրապարակի վրայ նոր նոր երեւոյթներ տեղի ունեցան. — նոր ապրանք, նոր գին, նոր յաճախորդ: Վաճառականութեան մէջ գործելու մէթոտներն հիմնովին փոխուեցան, այնպէս որ փորձառութիւնը, ա՛լ առանձին գործելու անկարող, վնաս-

ներ միայն պատճառեց իրեն ապաւինողներուն: Այլ եւս լիովին ապացուցուեցաւ սա ճշմարտութիւն թէ առեւտրական գործերու մէջ սոսկ փորձառութիւնն արժէք չունի, թէ յաջողելու և մրցումի դիմանալու համար հարկ է նախ Առեւտրական Գիտութիւնն ուսանիլ տեսական և գործնական կերպով: Եւ այդ օրէն, ճարտարագործ ու վաճառական ազգեր ամէն ճիգ ի գործ դրին առեւտրական դպրոցներ բանալու, հրապարակային դասախօսութիւններ հաստատելու և առեւտրական նիւթերու վրայ խօսող աժանագին տետրակներ հրատարակելու: Մինչեւ այսօր ալ Առեւտրական Գիտութիւններն ամէն դասակարգի մէջ տարածելու համար անոնք այնքան մեծ զոհողութիւններ կ'ընեն որքան հրապարակին վրայ առեւտրական մրցումն օր ըստ օրէ կը ծաւալի ու կ'ընդհանրանայ:

Այս մրցման մէջ մենք խիստ աննշան դեր մը ունեցած ենք: Բայց մեր երկիրը, Թուրքիա, իր աշխարհագրական դիրքով, մեծ հակադեցութիւնը կրած է այդ մրցման: Կէս դար առաջ, Թուրքիոյ վաճառականութիւնը, այս օրուանին հետ բաղդատմամբ, մեծ բան մը չէր: 1853—56ի Սրիմու պատերազմը պատճառ եղաւ որ Անգլիա ու Ֆրանսա մօտէն ուսումնասիրեն Թուրքիոյ վաճառականութեան կարեւորութիւնն եւ սկսին առեւտրական աւելի սերտ յարաբերութեան մէջ մտնել Թուրքիացիներու հետ: Անոնց գործառնութեան կեդրոններն էին Պոլիս և Իզմիր, եւ միջնորդները՝ Հայ եւ Յոյն վաճառականներ: 1870ի Ֆրանք եւ Գերման պատերազմը Անգլիոյ եւ Ֆրանսայի վրայ աւելցուց նաեւ Գերմանիան, որ միւսներէն բոլորովին տարբեր տրամադրութիւններով գործի սկսաւ եւ ո՛չ միայն Պոլսոյ եւ երկրորդական հրապարակներու հետ առուտուր ըրաւ, այլ մինչեւ Անատոլուի խորերը, պզտիկ վաճառականներուն ոտքը գնաց, երկար պայմանաժամերով ապրանք ծախելու համար անոնց: Վերջին տարիներս Գերմանիոյ օրինակին հետեւեցաւ Իտալիա եւ կ'ըսուի թէ մօտաւոր ապագայի մէջ անոնց պիտի հետեւի նաև Ամերիկա, որ, եթէ յօժարի ապառիկ ծախել, ամենքը պիտի գլխէ անցնի իր առեւտրական ու գործնական տաղանդով:

Մեր հրապարակին վրայ, նոյն իսկ մեր շուրջը մղուած տնտեսական այս բուռն պայքարը տեսնելով, անկարելի է չմտածել ու չհարցնել իւրովի թէ ի՞նչ ընելու ենք որ, ձեռքենք յառաջդիմելը, գէթ մեր ստացած դիրքը կարենանք պահել: Դեռ ո՛չ Առեւտրական դպրոցներ ունինք, ո՛չ ալ, գէթ, առեւտրական դասընթացք մը մեր թաղային վարժարաններուն մէջ: Եթէ մեր յոյսը մեր առեւտրական գործունէութեան վրայ միայն դրած ենք, ցաւալի բան, որովհետեւ անցեալ օրերու մէջ ալ անով մեծ յաջողութիւն մը ունեցած չենք: Վերջին կէս դարու մէջ, յորում թուրքիոյ վաճառականութիւնն հսկայաքայլ յառաջդիմեց, հազիւ ունեցած ենք քանի մը վաճառականներ որք մէթոտով ու գիտակցութեամբ գործած ու լաւ դիրք մը շինած են: Բընենք միւս ֆիրմաները եւ պիտի տեսնենք որ մէկ մասը փոքր տաղանապէ մը ցնցուելով փճացած եւ մէկ մասը մրցումի չը դիմանալով հրապարակէ քաշուած է: Մաս մը կայ որ նըպաստաւոր շրջանակներու շնորհիւ կամ մեծ դրամագլխի ոյժով միայն կանգուն մնացած է եւ ուրիշ մաս մ'ալ՝ որ կը գործէ սեւը ներս ճերմակը դուրս: Անցելոյն մէջ ահա ասոնք եղած են մեր վաճառական դասու յաջողութեան պայմանները, որք ո՛չ թէ ապագային, ներկային համար իսկ ապահովութիւն ներշնչելէ հեռի են: Հիմակ ամէն ժամանակէ աւելի անմիջական պէտք ունինք Առեւտրական Գիտութեան ամէն ճիւղերն հիմնովին ուսումնասիրելու, քանի որ այլ եւս չեն բաւեր շուկայի կրթութիւնն ու փորձառութիւնը:

Այս պէտքն է ահա որ թելադրած է մեզ պատրաստել Առեւտրական գիտութեան է՛ն կարեւոր ճիւղերէն մին, թուրքիոյ Առեւտրական եւ Տնտեսական Աշխարհագրութիւնը, որ Պոլսոյ եւ իւրաքանչիւր գաւառի դիրքին, բերքերուն, բնակչաց, վաճառականութեան եւ տնտեսական ու առեւտրական կացութեան վրայ մանրակրկիտ ու այլազան տեղեկութիւններ ու վիճակագրական ծանօթութիւններ տալով պիտի կրնայ օգտակար ըլլալ թէ՛ գործի մարդոց, թէ՛ դպրոցի աշակերտներու, կարելի եղածին չափ աշխատած ենք ճիշտ

թուանշաններ եւ ստոյգ տեղեկութիւններ տալու, իսկ եթէ, մեր ջանքերուն հակառակ, սխալմունքներ պատահած են, աղոնք նոյն իսկ է՛ն վաւերական աղբիւրներու հակասութեանց արդիւնք են պարզապէս: Օրինակի համար, Պոլսոյ տուները Ալի ծէվատ պէյ 66,413 կը հաշուէ, մինչ Չէրվաթի մինչեւ 162,950ի կը հանէ: Նոյնպէս, Հանրային Պարտուց Վարչութիւնն իր տեղեկագրով 4 տարուան մէջ 50,739728 քիւօ գինիի արտադրութիւն կը ցուցնէ, մինչ մաքսային վիճակագրութիւնը 20,758,000 կը նշանակէ: Այս հակասութիւնները բացատրող բնական պատճառներ ալ կան, — զօրօրինակ վաճառականներն յաճախ Տրապիզոնի համար շոգենաւ կը բեռնեն իրենց ապրանքը, սակայն, շոգենաւը դեռ հոն չը հասած, իրենց յաճախորդներուն պահանջման համեմատ, Սամսոն, Կիրասոն, կամ այլուր հանելու հրաման կը ղրկեն: Արդ, եւրոպական վիճակագրութեան մը մէջ սաչափ ապրանք կը նշանակուի իբրեւ Տրապիզոն մտած, մինչ մեր մաքսային վիճակագրոյցերուն մէջ ապրանքին ելած նաւահանգիստներուն հաշուին կ'անցնի զատ զատ: Նոյնպէս օտար երկիրներէ եկած ապրանաց քանակութիւնը մաքսային տետրակներէն կ'առնուի, ուր pays d'origineը (այսինքն ապրանքին բուն ո՛ր տեղէն եկած ըլլալը) չի նշանակուիր, այլ ապրանքին շոգենաւ դրուած նաւահանգիստէն դատելով իրր այդ երկրի ապրանք կը ճանչցուի: Այս կերպով, զուրիցերական կամ գերմանական ապրանք մը, որ Դրիէսդէի ճամբով կուգայ, Աւստրիական կը նկատուի, կամ Համպուրկի ճամբով եկած ամէն ապրանք Գերմանական կ'արձանագրուի: Այս տեսակ ստուար երկերու մէջ վիճակագրական ստոյգ ծանօթութիւններ տալու դժուարութեան մասին տեսէք ի՞նչ կ'ըսէ Բրոֆէսոր Ֆիլիքս Վիրճիլի, «Յերկրագործութիւնն յիտալիա» գրքին մէջ. — «Միտքս դրած էի (Իտալիոյ) ամէն մէկ գաւառի երկրագործական կացութեան վրայ մանրակրկիտ տեղեկութիւններ տալ: Հասկցայ իսկոյն թէ այս նըպատակս դիւրաւ գործադրելի բան մը չէր: Հարկ էր գաւառ գաւառ պտտիլ եւ անոնց երկրագործական կանոնագրութիւնն ու վիճակագրութիւնը քննել: Դժբախտաբար շատ քիչեր

բարոյական պարտաւորութիւն մը կը համարին իրենց այս տեսակ հարցումներու պատասխանել: Բարեկամ ու պաշտօնակից անձեր, որք շատ ժամանակ կը գտնեն երկար նամակներ գրելու կամ քննադատական հրատարակութիւններ ընելու, ընդհակառակը միջոց չեն ունենար իրենցմէ քանի մը քայլ հեռու տեղի մը մարդոց հետ տեսնուելու եւ անոնցմէ տեղեկութիւն մը առնելու: Աւելի գէշը կայ: Երկրագործական հաստատութեանց պետեր իսկ չեն հաճիր պատասխանել ամենայն քաղաքավարութեամբ իրենց ուղղուած հարցումներուն, եւ երբ, երկար յոգնութիւններէ ու հետազոտութիւններէ ետք, քանի մը թուանշան կամ տեղեկութիւն կը տրուի ո՛ր եւ է բանի մը վրայ, իսկոյն քննադատութեան կ'ելլեն եւ հեղինակին երեսին կը զարնեն թէ սա՛ կէտը մոռցած է, նա՛ կէտը սխալ գրած է եւայլն:» — Ուրեմն, այս տեսակ գործի մը պատրաստութեան յատուկ զօրուարութիւնները նկատի առնելով, յուսանք թէ ներողամտութիւն ցոյց կը տրուի ակամայ թերութեանց համար: Իսկ քննադատներու, եթէ գտնուին, ամէն ատեն պատրաստ ենք պատասխանելու:

Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ա Ղ Յ Ի Ի Ր Ք
ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

(Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ)

مفصل ممالك عثمانی جغرافیه سی	على صائب
» » » »	على جواد
» » » »	محمد شوکت

- Hermann — Anatolische Landwirtschaft
- Kannenberg — Kleinasien Naturschatze
- Schwegel — Volkswirtschaftliche studien über Konstantinopel
- Loehnis — Informationsreise in der Levante
- Cervati — Annuaire Oriental du commerce
- Yves Guyot — Dictionnaire du commerce et de l'industrie
- Vital Quinet — Turquie d'Asie
Bulletin Commercial Français
- Vincent Caillard — Reports of council of administration of the Ottoman public Debts

Մետաքսի վաճառականութիւնը

Պատմական. — Մետաքսի գլխաւոր հրապարակը. — Մետաքսի արտադրութիւնը եւ վաճառականութիւնը զանազան երկիրներու մէջ. — Թուրքիոյ մետաքսը. — Արհեստական մետաքս. — Արհեստականը բնականէն որոշելու եղանակը. — Վայրի մետաքս:

1540էն սկսեալ, Լիօն միակ մթերանոցն էր ամէն օտար մետաքսներու, բայց 17րդ և 18րդ դարերուն մէջ կորսնցուցուց իր այս առանձնաշնորհումը: Չինաստանի և Ճաբոնի մետաքսներն սկսան Լոնտոն մթերուիլ: 1851ին, քանի մը Լիօնական տուներ ուղղակի յարաբերութիւն հաստատեցին Ծ. Արեւելքի հետ, բայց չյաջողեցան: Մինչեւ 1862, Եւրոպայի մետաքսի գլխաւոր հրապարակը Լոնտոն էր, միջազգային մթերանոց ասիական մետաքսներու: Բայց մետաքսեղէններու շինութեան մեծ կեդրոն մը, ինչպէս էր Լիօն, նախնական նիւթերու ալ մեծ մթերանոց մը պէտք էր ըլլալ: Գերագոյն ջանքեր եղան որպէսզի Լիօն իրեն պէտք եղած մետաքսը Լոնտոնէ չզնէ, այլ ուղղակի Չինաստանէն ու Ճաբոնէն բերել տայ: Պայքարը շատ սաստիկ եղաւ: Անգլիացիք իրենց օժանդակ ունէին անհուն դրամադուրներ, Ծ. Արեւելքի և անոր սովորութիւններուն փորձառութիւնը, այն երկիրներուն մէջ առեւտրական լաւ կազմակերպուած հաստատութիւններ, առեւտրական նաւերու հրզօր տորմիդ մը և առաջնակարգ պանքաներ: Լիօն քաղաքը, հակառակ այս կացութեան, ամենեւին չվարանեցաւ: Լիօնի պանքէռներն ու մետաքսի բոլոր վաճառականները նպաստեցին ձեռնարկուած գործին յաջողութեան: Բարիզի Գոնթուառ տ'Էսքօնդը Չինաստանի մէջ կարեւոր մասնաճիւղ մը

բացաւ և Մէսսօժըրի ընկերութիւնը մինչեւ Չինաստան շոգենաւ բանեցուց : Սուէզի ջրանցին բացումը մեծապէս օգնեց այս ջանքերուն, որք կատարեալ յաջողութեամբ պսակուեցան : Մինչ 1862-67ին Շանկայէն, Քանդոնէն և Եօքօհամայէն Անգլիա զրկուած էր 49,300 հատ անթափ (écru) մետաքս, ընդդէմ 12,000 հակի որ Ֆրանսա արտածուեցաւ և 6630ի որ Ամերիկա գնաց, ընդհակառակն 1892-97ին Անգլիա մտաւ 4500 հակ, մինչ Ֆրանսա ստացաւ 90,950 հակ և Ամերիկա՝ 42,550 հակ :

* * Մ. Արեւելքի մետաքսի վաճառականութիւնը շատ դժուար գործ է : Չինացի ու ճարոնցի վաճառականներ երկրին ներսերէն կը գնեն մետաքսը, կը դասակարգեն և ապա կը բերեն Շանկայ, Քանդօն, Չէֆու, Եօքօհամա և կը ծախեն այդ տեղերն հաստատուած Եւրոպացի վաճառականներու, որք այս մետաքսները Եւրոպա կը զրկեն կամ իրենց հաշուոյն ծախուելու համար կամ Լիօնէն, Միլանէն, Չիւրիխէն եւ Լոնտոնէն եղած հրամանները գործադրելու համար : Չինացիք ու ճարոնցիք այժմ կը ջանան ուղղակի իրենք ծախել Եւրոպայի, միսիանակ միջնորդի ձեռքով գործելու :

* * Հիմա խօսինք զանազան երկիրներու մետաքսի արտադրութեան ու վաճառականութեան վրայ :

Չինաստան կ'արտադրէ տարին 10 միլիոն քիլօ մետաքս : Արտածութեան հրապարակներն են Շանկայ, որ տարին 60-65,000 հակ կամ 3-3½ միլիոն քիլօ կ'արտածէ, Քանդոն, որ տարին 40,000 հակ կամ 2 միլիոն քիլօ կ'արտածէ : Կ'արտածուի նաև 800,000 քիլօ մետաքս, քիւսան ըսուած տեսակէն, որուն վրայ պիտի խօսինք յետոյ :

Ճարոն. — Տարեկան արտադրութիւն 7-8 միլիոն քիլօ : Եօքօհամայի նաւահանգիստէն տարին 3-3½ միլիոն քիլօ մետաքս կ'արտածուի : Մնացեալը տեղւոյ վրայ կ'սպառուի :

Անգլ. Հնդկաստան (Պէնկալ, Բէնճալ) . — Արտադրութիւն բնական մետաքսի 600,000 քիլօ եւ վայրի մետաքսի՝ 60,000 քիլօ :

Հնդկաչին. — Արտադրութիւն 1 միլիոն քիլօ, որուն

Քաշմիրի այծերուն մազն երկար է եւ մոխրագոյն, դեղին կամ ճերմակ կ'ըլլայ : Թիպէզի եւ Քըրկըզի այծերուն մազն աւելի նուրբ է : Արեւելեան Հնդկաստանի մէջ ահագին քանակութեամբ այծ կայ : Մատրասէ եւ Պօմպայէ տարին 20 միլիոն այծի մորթ կ'արտածուի : Քաշմիրի մէջ, տեղացիք այծի մազերով կը շինեն այն շալերը, որք «Հնդկաստանի քաշմիր» անուանով անուանի են : Թիպէզի այծերուն տեսակը տարածուած է ամբողջ կեդրոնական Ասիոյ, Աֆղանիստանի եւ Մոնկոլիոյ մէջ : Ռուսական Թուրքիստանի այծերուն մազը, որ շատ յարգի է, ամէն տարի Նիժնի Նովկոբօտի տօնավաճառը կը բերուի Թաթար կարավաններու միջոցով : Մոնկոլիոյ ապրանքները գլխաւորաբար արեւելեան Չինաստանի նաւահանգիստներէն կ'արտածուին, իսկ Հնդկաստանի ապրանքները Պօմպայ կը զրկուին եւ անկէ Լոնտոն կ'արտածուին : Ահա քանի մը թուանշաններ որք ամփոփ գաղափար մը կուտան Եւրոպայի, Արեւելքի եւ Ափրիկէի հիւսիսային մասին մէջ գտնուած այծերուն քանակութեան վրայ . —

Թուրքիա	6	միլիոն	
Սպանիա	5	»	
Ալժերիա	3	»	600 հազար
Գերմանիա	2	»	750 »
Ռուսիա	2	»	
Իտալիա	1	»	750 »
Աւստրիա	1	»	600 »
Բորդուկալ	1	»	500 »
Ֆրանսա	1	»	420 »
Հունգարիա			600 »
Շուէտ-Նորվեկիա			500 »
Զուիցերիա			400 »
Յունաստան			300 »
Պելժիա			200 »
Սերպիա			180 »
Դանիա			125 »
Մարոք			50 »
Եգիպտոս			25 »

Հիւսիսային Ամերիկա շատ քիչ այժ ունի և հետեւապէս ահաւոր մրցակից մ'է այս նախանիւթին գնման համար : Մ. Նահանգները Գերմանիայէ, Հնդկաստանէ, Սպանիայէ եւ Ալժիրիայէ մեծաքանակ այծի մորթ կը գնեն : Ֆիլատելֆիոյ մէջ մէկ գործարան մը միայն օրական 4000 տուգինա այծի մորթ կը պատրաստէ : Ֆրանսա եւ Ամերիկա առանց մաքսի կ'ընդունին օտար երկիրներէ եկած այծի մորթերը : Ֆրանսա ալ, Ամերիկայի պէս, ստիպուած է դուրսէն գնելու իր գործարաններուն պէտք եղած նախնական նիւթը. վասն զի իր այծերը քիչ են եւ անոնց մորթերն ալ ընտիր տեսակէ չեն : Այծի ձագին կամ ուլին մորթն աւելի յարգի է : Վըրայի մազերն հանելէ ու մորթը ներկելէ ետք, կը շինեն ձեռնոցներ որք փայլուն (glacé) կ'ըսուին, եթէ մորթին արտաքին կողմը վրան բերուի : Իսկ երբ մսին կողմի մասը ձեռնոցին արտաքին մասը կազմէ, Շուէտական ձեռնոց կ'ըսուի : Կլասկները Եւրոպական մորթերով կը շինուին, իսկ Շուէտականը՝ հարաւային Ամերիկայէ եկած մորթերով, որոց արտաքին մասն այնքան լաւ չէ : Ուլի մորթով կը շինուին նաև նուրբ ու հաստատուն կոշիկներ :

ԱՅՆԹԱՊ. — Ճարտարագործ քաղաք, Հալէպի հիւսիսային կողմէն 120 քիլոմէրը (24 ժամ) հեռի : Ուղղակի հաղորդակցութիւն Իսկէնտէրունի նաւահանգստին հետ : Առատ արտադրութիւն արմտիքի, շուշմայի եւ խաղողի : Գաւառակն ունի 7 գիւղատեղամբ կամ 19¼ գիւղ : Համբաււոր է պիստակը, զոր ամէնէն աւելի կ'արտադրեն Ամարը ձէտիտ, Պէյլիքօվա, Տաղտաղան, Տիւլիք, Գարարունար ևլն : Օրուլ և Նէշիտ կ'արտադրեն ձիթապտուղ եւ թուզ : — Հեռագիր թուրքերէն եւ արաբերէն լեզուներով : ճարտարութիւն . — Հիւսուածներ, անուշեղէններ (բեքիլի, սուճուզ, բէմեզ եւայլն), օճառաշինութիւն, կոշկաշինութիւն եւայլն : Մեծ ցերածում մանածի, մասնաւորապէս պաճա ըսուած հիւսուածոններու շինութեան համար : Կ'արտադրէ ալաճա, կաշի, չոր պտուղ եւ պիստակ (Շամ Ֆրսրղը) : Այնթապի մէջ արհեստները շատ յառաջացած վիճակ մը չունին դժբախտա-

պէս : Երկրագործութիւնն ալ ետ մնացած է : Մշակը հաւատարիմ կը մնայ հին սովորութիւններուն եւ հետեւապէս անգիտակ է երկրագործական նոր գիւտերուն : Այնթապի արտածութեանց մէջ առաջին տեղը կը բռնէ պիստակը, որուն արտադրութեան գումարը, նպաստաւոր տարիներու մէջ, 20-22,000 Օսմ. ոսկիի կը հասնի : Յետոյ կուգան սեւ չամիչ, շուշմա եւ կարմիր չամիչ, որ Այնթապի ծայրը գտնուած գիւղերէն կ'ելնէ : Սեւ չամիչէն տարին մօտաւորապէս 2000 պարկ, այսինքն ամբողջ հունձքին 1|10ը, կ'արտածուի : Իսկ կարմիր չամիչը գրէթէ ամբողջութեամբ կ'երթայ Ֆրանսա, Եգիպտոս եւ Միջերկրականի նաւահանգիստները :

ԱՅՏԸ. — Թուրքիոյ վաճառաշահ նաւահանգիստներէն մին : Մակերևոյթ 53,000 քառակուսի քիլոմէրը : Բնակիչ 1,400,000 : Ունի 2819 գիւղ եւ 283,000 տուն : ճարտարութիւն . — Ոստայնանկութիւն, խաղախորդութիւն, օճառաշինութիւն եւայլն : Գլխաւոր բեքերն են . — Թարմ և չոր խաղող, խողկաղին, աֆիօն, չոր թուզ, ձիթապտուղ եւ ձէթ, բամբակ, բուրդ, բակլայ, տորոն եւայլն : (Տեսէ՛ք նաև « Առաջնորդ Վաճառականաց »-ի Ա. տետրը) :

ԱՅՎԱԼԸՔ. — Գաւառակ Գարասիի : Պոլսէ 50 մղոն հեռի : Առողջ կլիմայ : Պատուական նաւահանգիստ : Բնակիչ 20,000 : Տուն 5000 : ճարտարութիւն . — 75 ձիթարան հին դրութեամբ եւ 8 հատ շոգեշարժ, 200 գործարան գինիի եւ մասիխայի, 24 գործարան օճառի, 50 խաղախորդարան, 3 շոգեշարժ շաղաքք եւ 30 հողմաղաց : Բեք . — Արմտիք, իւզ, գինի, կաշի, խողկաղին : Ներածման ու արտածման վաճառականութիւնը զարգացած : Տարեկան գործառնութիւն աւելի քան կէս միլիոն Օսմ. ոսկի : Միջին հաշուով, տարին 1200 շոգեհաւ և 3000 առագաստանաւ կ'այցելեն : Այվալըքի ձէթն հետզհետէ կարելոր տեղ մը կը բռնէ օտար սպառող հրապարակներուն վրայ :

ԱՆԱԳ. — Ճերմակ ու կակուղ մետաղ մը որ կը հալի 228⁰ի մէջ : Չոր կամ խոնաւ օդին շաւրուի, բայց տաքուն կ'որքսիտանայ : Աւելի կարծր, տարածուն եւ կպչուն է քան կապարը : Նաև աւելի առածգական է : Անխորժ հոտ մը ունի որ իրեն յատուկ է : Հանածոն կը կոչուի անագի թըթ-ուածնատ կամ քսիդիդ, որ գլխաւորապէս կ'ելնէ Բօրնու-այլէ(ուր շատ հին ատենէ ի վեր կը շահագործուի), Սաքսէ, Պոհեմբայէ եւ Հոլանտական Հնդկաստանէ (Պանքիի եւ Պի-լիդոնի կղզիները) : Անագի թթուածնատը նախ կը ճզմուի եւ յետոյ կը լուացուի անշարժ սեղաններու վրայ թէ ան-միջապէս թէ անգամ մը կրակէ անցընելէ ետք, երբ մեծ քանա-կութեամբ երկաթի հրաքար կը պարունակէ : Այսպէս կ'ան-ջատեն օտար մետաղները ու մասնաւորապէս երկաթը : Յե-տոյ կը դնեն ցոլացիկ հնոցի մը թեթեւապէս հակած մասին վրայ եւ մեղմով կը տաքցնեն : Անագը կը հալի եւ մասնա-ւորապէս շինուած խոռոչի մը մէջ կը թափի, ուրկէ կ'երթայ արտաքին աւազան մը : Հոն, հալած մետաղի աղտերը, ծառի ճիւղերու միջոցաւ խառնուելէ ետք, վրան կ'ելնեն եւ անագը կը մնայ տակը : Անագը կը ծախուի ծեծուած, կամ բարակ թիթեղի եւ կամ փոշիի վերածուած (նկարիչներու համար) : Անագով կը շինուին կարգ մը տնական անօթներ, ինչպէս դգալ, պատառաքաղ, աշտանակ, անօթ, պնակ ևն :

Վանառակաւնութիւն. — Օսմանեան մաքսատան վիճա-կագրութեանց համաձայն, 1899 — 1900ին թուրքիա մտած ա-նագին քանակութիւնը կը հասնի 344,742 քիլոյի, որուն ար-ժէքն է 5,179,570 ղրչ., մէճիտը 19 ղչ. էն : Կ. Պոլիս մի-նակ ինք 200 թօնօ անագ կը ներածէ, որուն մեծ մասը կը ղրկուի ներքին գաւառները : Անագի գլխաւոր հրապարակը Լոնտոնն է : Քանի մը տարի առաջ փորձուեցաւ ֆրանսական անագ քել մեր հրապարակին վրայ, բայց չյաջողեցաւ, ու-րովհետեւ տեսակն այնքան լաւ չէր : Մինչեւ 1899, թուր-քիա մտած ամբողջ անագը Լոնտոնէ կուգար : Ամէնէն յար-գի ապրանքն էր Լոնտոնի Միչըլ գործարանին ապրանքը, որուն մարեան էր հաւալուան մը (թուչուն) : Քանի մը տա-րիէ ի վեր նոյնպէս Լոնտոնէ կուգայ ուրիշ ապրանք մը,

Բէմբուլի գործարանէն, եւ կ'ըսուի թէ շատեր կը նախընտ-րեն այս ապրանքը : Գերմանք, 3-4 տարիէ ի վեր, կը փոր-ձեն Անգլիացիներուն հետ մրցիլ : Համպուրկէ Պոլիս կը նե-րածեն ուրիշ տեսակ ապրանք մը, որուն վրայ զանգակի նշան մը կայ եւ թօնօ գլուխ մէկ սղերլին պակաս կ'ար-ժէ անգլիականէն : Նաև շատ փայլուն է եւ յաճախորդները կը բռնեն : Այսօր Գերմանք տարեկան 20—30 թօնօյի չափ կը ծախեն մեր հրապարակին վրայ եւ հաւանական է որ հե-տըզհետէ յառաջդիմեն : Այս արդիւնքը դիւրաւ ձեռք բեր-ուած չէ : Բայց Գերմանք յարատեւող են և ասիկա իրենց յաջողութեան պայմաններէն մին է : Թուրքիա ներածուած ապրանքը ձողակներով կուգայ : Տեսակ մը կայ որ 2 ձողակը մէկ լիպրա կը կշռէ, և ուրիշ տեսակ մը որուն 5 ձողակը մէկ լիպրա է : Պոլսոյ մէջ 3 ձողակնոցը աւելի կը քշուի, իսկ գաւառներու մէջ 5 ձողակնոցը : Այս ձողակներ եռանկիւն են և 6 սնդմ. երկայնութիւն ունին : Մէկ տակառը կը պա-րունակէ 2 անգլ. կենդինար անագ : Առաջ, Կ. Պոլիս, իր սպառումին համար, 4 կենդինարնոց տակառներ կ'ուզէր, վասն զի այս պատատումին շնորհիւ թօնօ գլուխ մէկ սղեր-լին կը շահէր : Հիմակ որ զինները բարձրացած են, 2 կեն-դինարնոցները կը փնտռուին նորէն, որպէսզի կարելի ըլ-լայ ղիւրութեամբ ծախել : Վաճառումները կ'ըլլան Կ. Պո-լիս յանձնելի, կանխիկ, առանց զեղչի : Անագին գինը շատ ելեւէջ կրած է : 1896ին թօնօն 61 սղերլին էր, մինչ 1899 Փետրվար 14ին բարձրացաւ 117 սղերլինի և Սեպտմ. 23ին՝ 151 սղերլինի : Գաւառներուն մէջ ամէնէն աւելի էրզրում է որ անագ կ'սպառէ : Տարին միջին հաշուով 150,000 քիլօ անագ կ'ստանայ, 100 կամ 200 քիլոնոց տակառիկներով : Էրզրում ներածուած անագը գրէթէ ամբողջովին Անգլիայէ կը հայթայթուի : Վաճառականք իրենց յանձնարարութիւն-ները կ'ընեն Լոնտոն, ոմանք ուղղակի ոմանք Տրապլոնի յանձնակատար տուններու միջոցաւ : Էտրնէի մէջ տարին 10 թօնօ անագ կ'սպառի : Գլխաւոր ներածողն է Աւստրիա : Յետոյ կուգայ Ֆրանսա : Բայց աւստրիական անագը աւելի յարգի է, վասն զի կլայեկուած անօթներն աւելի փայլուն

կ'ընէ: Հալէպի և Տիարպէքիւրի վաճառականներն ալ Անգլիայէ կը բերեն անագը, որուն մէկ մասը կը ծախուի կլայեկիչներու և մնացեալը՝ այն արհեստաւորներուն որք սատափով կը դրուագեն: Ասոնց գործածած անագը նախապէս ձգտումի կ'ենթարկուի եւ թել կ'ըլլայ: Անգլիական անագն յարգի է, որովհետեւ կապոյտի զարնող ճերմակ գոյն մը կուտայ կլայեկուած անօթին, մինչ Քրանսականը դեղինի զարնող ճերմակ գոյն մը կ'առնէ, որ յարգի չէ: Զգտումի գործողութեան ժամանակ, Քրանսական անագը շուտով կը կտորի, մինչ անգլիականը՝ ո՛չ:

Անագի վրայ ընդարձակ գործ ընող տուներն են. —

Պոսթըր, Son եւ Ընկեր.	, Լոնտոն		
Հիւկ, Շեմբրեեիս եւ Ընկ.	»	83	Կրէյտչըրչ փողոց
Միչըլ (ձօն)	»	17	»
Մօռդիմըր եւ Ընկերուրիւն	»	10	Պըշէյն

Անագի սպասներ. — Ժ.Գ. դարէն ի վեր անագն ընթացիկ գործածութիւն ունէր եւ սեղանի յատուկ ամէն տեսակ անօթներ կը շինուէին անով: Ժ.Ն. դարուն մէջ, Քրանսացի անուանի արհեստագէտներ ճշմարիտ գլուխ գործոցներ շինեցին այս մետաղով: Պրիոյի քսիադինն (եքպըրզ) ու պնակը, որք Լուվրի թանգարանին մէջ պահուած են, յայտնապէս ցոյց կուտան թէ ի՞նչ կատարելութեան կարելի է հասնիլ բանուելու անընդունակ այս մետաղով: Ժ.Ը. դարուն, անագի գործածութիւնը նուազեցաւ Քրանսայի մէջ, մինչ ի Գերմանիա, անյիշատակ ժամանակներէ ի վեր, տեսակ տեսակ անօթներ կը շինուէին անագով: Ժամանակ եղաւ որ Եւրոպայի մէջ ամէն տեղ նորածեւութիւն եղաւ անագէ սպասներու գործածութիւնը: Մինչեւ իսկ գեղարուեստական առարկաներ ալ շինուեցան, որք շատ չտեսեցին վասնզի անագը շինուածքին նրբութիւնները կ'եղծանէր ժամանակ անցնելէ ետք:

ԱՆԱԳԱՊՂԻՆՁ. — Ծանօթ էր շատ հին ատեններէ ի վեր և գեղարուեստական առարկաներու պատրաստութեան ծառայելէ շատ առաջ գործածուած էր ընտանեկան

անօթներու շինութեան: Անագապղինձը կը բաղկանայ 91,40 մաս պղինձէ, 5,60 մաս անագէ, 1,60 մաս գինկոյէ եւ 1,40 մաս կապարէ: Անագապղինձէ առարկաներու շինութիւնն էապէս բարիզեան է և երկու որոշ ճիւղերու կը բաժնուի — արձանական և զարդական: Արձաններու շինութիւնը մեծ մղում առաւ վերջին ժամանակներս, շնորհիւ Քօլասի գիւտին որ հին ատեններու գլուխ-գործոցները պզտիկցնելու մաթեմատիքական մէթոտ մը գտաւ: Պարպրիէն առաջին եղաւ որ 1838ին Քօլասի մէթոտը կիրարկեց անագապղինձի ճարտարարուեստին մէջ, որ մեծ զարգացում ստացաւ և գըրէթէ Ֆրանսայի մենաշնորհն եղաւ, շնորհիւ իր անուանի արձանագործներուն: Այսօր Գերմանիա, Աւստրիա և Պելժիա սկսած են մրցիլ Ֆրանսայի անագապղինձին դէմ, որուն կեղծն ալ ելած է: Կեղծ անագապղինձն ուրիշ բան չէ բայց եթէ կալվանեան խաւով մը ծածկուած գինկօ: Գերմանիա կարեւոր գործարաններ ունի, որոնց աժան բայց ընդհանրապէս անճաշակ արտադրութիւններով կ'ողողէ հըրապարակը: Ճարտն մասնաւոր տեղ մը կը բռնէ անագապղինձէ առարկաներու շինութեան մէջ, Ճարտնցիք այս մասին շատ մեծ ճարտարութիւն ունին, բայց Եւրոպական օրինակներուն հետեւելով կամաց կամաց կը կորսնցնեն իրենց գեղարուեստական նուրբ յատկութիւնները: Հիմակ սկսած են շինել խիստ ստորին տեսակ առարկաներ: Ծատ երկիրներ մեծ մաքս դրած են օտար անագապղինձներու վրայ: Միացեալ Նահանգները 65 % մաքսատուրք կ'առնեն, իսկ Հարաւային Ամերիկա՝ 30-40%: Մաքսերը Ռուսիոյ և Սպանիոյ մէջ ալ աւելի են: Միայն Անգլիա հաւատարիմ կը մնայ ազատ փոխանակութեան սկզբունքին: Գիտար է որոշ կերպով ըսել թէ այսօր որչափ գործաւոր կ'աշխատին անագապղինձի ճարտարարուեստին մէջ, որ այսօր բազմաթիւ ճիւղերու բաժնուած է: Գործաւորներուն ապրուստը լաւ է: Վարպետներու և գործաւորներու միջեւ կատարեալ համաձայնութիւն կը տիրէ: 30 տարիէ ի վեր բանթող եղած չէ: Այսօր ամէն գոյնէ անագապղինձ կը շինուի: Ճերմակ գոյնը կ'ստացուի անագի փոշիով և մինչեւ իսկ ալիւմինիումով, որ

փայտուն ձերմակ գոյն մը կուտայ եւ արծաթին պէս չի սեւնար: Միւս գոյները կ'ստացուին պղինձի եւ զինկոյի խառնուրդով: Մինչեւ վերջին ատեններս գերմանական գործարաններուն մենաշնորհն եղած էր այս տեսակ գունաւոր անագապղինձերու շինութիւնը, բայց քանի մը տարիէ ի վեր ֆրանսական գործարաններն ալ սկսան լրջօրէն մրցիլ գերմանականներուն հետ: Անագապղինձի փոշին մետաղներու եւ գաճեղէն ու կաւեղէն անօթներու վրայ քսուելով անագապղինձի նմանութիւն կուտայ անոնց: Այս փոշիներ, բաց օդին մէջ աւելի կամ նուազ տաքնալով, կ'ոքսիտանան եւ զանազան գոյներ կ'առնեն:

Կ. Պոլիս տարին միջին հաշուով 40,000 քիլօկրամ անագապղինձ կը ներածէ: Հին անագապղինձը, որ առաջ Ֆրանսա եւ Անգլիա կ'երթար, հիմա գրէթէ ամբողջութեամբ, իբր 100—150 թօնօ, Գերմանիա կ'արտածուի:

Կեղծ անագապղինձը իտալիայէն կուգայ աւելի, այսինքն Հռոմէն, Վենետիկէն եւ Նաբոլիէն: Կեղծարարք իրենց արտադրութեան մէջ զինկօ կը դնեն խնայութեան համար: Ֆրանսա, որ տարին 60,000 քիլօ անագապղինձ կը ներածէ եւ 360,000 քիլօ կ'արտածէ, 100 քիլօյին վրայ 60 ֆրանք մաքսատուրք կ'առնէ ներածումներէն:

ԱՆՍՆԱՍ. — Տեսակ մը պտուղ, որուն վրայ խիստ կարեւոր առուտուր մը տեղի կ'ունենայ Անգլիոյ եւ իր գաղթավայրին՝ Պահամա կղզեաց միջեւ, ուր մեծաքանակ անանաս կը մշակուի արտածման համար: Անանասները պղզտիկ սնտուկներու մէջ կը դրուին եւ այնպէս կ'արտածուին Անգլիա: Մարսիլիա եւս կարեւոր հրապարակ մ'է անանասի համար, որ գաղթավայրերէն կուգայ եւ մատուցումի ու խնդրանքի կարեւորութեան համեմատ գիներու ելեւէջներ կ'ունենայ: Այս պտուղին յարակից երկճիւղ տերեւներէն կը հանուի տեսակ մը թեւ, որով չուաններ եւ հիւսուածոներ կը շինուին:

50,000ը կ'արտածուի եւ մնացածը տեղւոյ վրայ կ'սպառի:

Աֆղանիստան եւ Պելունիստան. — Արտադրութիւն 50 հազար քիլօ:

Պարսկաստան. — Արտադրութիւն 250,000 քիլօ: Նուքա եւ Շուքա նահանգները կ'արտածեն 240,000 քիլօ խողակ եւ 50,000 քիլօ բժոժական մետաքս:

Պուլկարիա. — Արտադրութիւն 50,000 քիլօ մետաքս, եւ 200,000 քիլօ չոր խողակ որ Ֆրանսա եւ Իտալիա կ'արտածուի:

Յունաստան. — Արտադրութիւն 40,000 քիլօ մետաքս եւ 130,000 քիլօ խողակ:

Եւրոպական Ռուսիա. — Արտադրութիւն աննշան: Ներածում 500,000 քիլօ, որուն 300,000ը Լիօնէն ու Միլանէն, եւ մնացածը Ասիայէ (Չինաստան եւ Կովկաս):


Աւսրիա. — Արտադրութիւն 280,000 քիլօ մետաքս: Արտածութիւն 370,000 քիլօ չոր խողակ եւ 200,000 քիլօ մետաքս: Ներածութիւն 600,000 քիլօ մետաքս:

Իսպիա. — Արտադրութիւն 4½ միլիոն բժոժական մետաքս: Գլխաւոր հրապարակներ՝ Միլան եւ Թուրինօ: Իտալիոյ մետաքսի վաճառականութիւնը սապէս կ'ամփոփուի. —

	Ներածում	Արտածում
Թարմ խողակ	190,000	160,000
Չոր »	1,950,000	230,000
Բժոժական մետաքս	1,900,000	3,200,000
Բանուած »	30,000	3,300,000

(Շարունակելի)

Թուրքիոյ մետաքսը. — Արհեստական մետաքս. — Արհեստականը բնականէն որոշելու եղանակը. — Վայրի մետաքս:



ՏՈԿՈՍԻ ՀԱԹԻԻ

Սակ կը կոչուի 100 զրշ. ին մէկ տարուան տոկոսը: 3 0/0 սակը կը նշանակէ թէ 100 զրշ. ք մէկ տարիէն 3 զրշ. տոկոս կը բերէ: Արդ,

$$\begin{matrix} \text{Եթէ} & 100 \text{ զրշ. ք} & \text{Յ} & \text{բերէ} \\ & 1 & \text{»} & \frac{3}{100} \text{ պիտի բերէ, հետեւապէս} \end{matrix}$$

$\frac{T \times U \times S}{100} \times 3 \times S$ արդ, ընդհանուր եղանակով մը,

$$S = \frac{T \times U \times S}{100} : \text{Եթէ դրամագումարը սաչափ ամսուան հա-$$

մար տոկոսի դրուած է, այն ատեն կ'ունենանք սա ֆորմուլը

$$\frac{T \times U \times U \times S}{12 \times 100} : \text{Իսկ եթէ սաչափ օրուան համար է՝ հետեւեալ}$$

$$\text{Ֆորմուլը } \frac{T \times U \times O \times S}{365 \times 100}$$

Անգլիոյ մէջ տարին 365 օր կը հաշուեն, իսկ ուրիշ երկրներու մէջ, հաշիւներու դիւրութեան համար, 360 օր:

$$\text{Այն ատեն կ'ունենանք սա ֆորմուլը } \frac{T \times U \times O \times S}{36000}$$

Թիւերու եւ բաժանարարներու մեքոսք. — Առջի մէթոտը ճիշտ է, բայց երկայն: Ենթադրենք թէ 4815 զրշ. ին 45 օրուան տոկոսը պիտի գտնենք 6 0/0 էն: Արդ, պէտք է հետեւեալ գործողութիւններն ընենք. $\frac{4815 \times 45 \times 6}{36000}$: Այս ձեւը

$$\text{կրնանք պարզել սապէս. } \frac{4815 \times 45 \times 6}{36000} = \frac{4815 \times 45}{6000}$$

կոչուի դրամագումարի եւ օրերուն արտադրեալը եւ բաժանարար սակին եւ 36,000 ին բաժանման արդիւնքը: Սովորական սակերուն կը համապատասխանեն հետեւեալ բաժանարարները. —

12	3,000	Կանոն. — Տոկոսը փնտռելու համար
9	4,000	թիւը (այսինքն դրամագումարի եւ օրերուն
6	6,000	արտադրեալը) գտնել, եւ այդ թիւը
5	7,200	բաժնել համապատասխան բաժանարարով
4 1/2	8,000	(սակին եւ 36000 ին քանորդը):
4	9,000	
3	12,000	

Գործողութիւնն աւելի դիւրացնելու համար, հաշիւները նախ 6 0/0 էն կ'ընեն, (բաժանարար 6000), յետոյ, եթէ սակը 3 0/0 է, արտադրեալին կէսը կ'առնեն, եթէ 1 1/2 է՝ քառորդը եւ եթէ 4 է՝ 2/5 ք, եւ այլն: Շարք մը գումարներու տոկոսն հաշուելու համար, ինչպէս կը պատահի ընթացիկ հաշիւներու, զեղջի ցուցակներու մէջ եւ այլն, ամէն անգամ բաժանում չեն ըներ, այլ իւրաքանչիւր գումարին համապատասխան թիւը կ'առնեն, կը գումարեն, 6000ով կը բաժնեն եւ յետոյ կը վերածեն 4 0/0 ի, 2 0/0 ի, եւ այլն:

Օրինակ. — 4815 ին 2 0/0 էն 45 օրուան տոկոսը գտնել.

$$\text{Տոկոս } 6 \frac{0}{100} \text{ էն } = \frac{4815 \times 45}{6000} = 36,11$$

2 0/0 էն հաշուելով, տոկոսը պիտի ըլլայ 36,11 ին 1/3 ք, այսինքն 12,03:

60 ի մեքոսք. — Ասիկա թիւերու մէթոտէն աւելի գործածական է: Հիմնուած է սա դիտողութեան վրայ. — դրամագումար մը, 6 0/0 էն, 60 օրուան մէջ, իր հարիւրերորդ մասին հաւասար տոկոս կը բերէ: Ապացուցանելը դիւրին է: Կը բաւէ օրինակ մը տալ. —

$$\frac{2518 \times 60}{6000} = 25,18$$

Ուրիշ օրինակ. — 3518 ի 60 օրուան տոկոսն է 35,18
3798 ի » » » » 37,98, ևն

Արդ, 60 օրուան տոկոսը գիտնալով, դիւրին է սաչափ օրուան տոկոսը գտնել: Առնենք Ա. օրինակը, այսինքն 4815 ին, 6 0/0 էն, 45 օրուան տոկոսը.

6 0/0 էն	<u>60 օրուան տոկոսը</u>	48,15
	30	24,07
	15	12,03
		<u>36,10</u>
2 0/0 »		<u>12,05</u>

Պէտք է միշտ օրերու թիւը 60 ին պարզ կոտորակներուն վերածել : — Ուրիշ օրինակ . — 8988ին 4 1/2 էն 135 օրուան տոկոսը . —

6 0/0 էն	60 օր	=	89,88
	60 »	=	89,88
	6 »	=	8,98
	6 »	=	8,98
	3 »	=	4,49
6 0/0 էն	135 օր	=	202,21
	2 0/0 էն		67,40
	2 0/0 էն		67,40
	1/2 0/0 էն		16,85
	4 1/2 0/0 էն		151,65

Այս օրինակին մէջ 6 և 6 առինք և ո՛չ 12, որպէսզի 89,88 ին 1/3 ը առնելու և հետեւապէս գործողութիւնն երկարելու չստիպուինք :

1/3 ի մէքոսը . — Հետեւեալ մէթոտը, զոր շատեր չեն գիտեր, միւսներէն նախամեծար է, բայց պէտք է որ օրերու թիւը Յին մէկ բազմապատիկն ըլլայ : Տոկոսի սա՛ Փորմիւրը $\frac{7\text{ժ}}{6000}$ կրնայ այսպէս գրուիլ $\frac{7}{2000} \times \frac{\text{ժ}}{3}$, այսինքն դըրամագլուխը բաժնել 2000ով և օրերու թիւին 1/3ովը բազմապատկել : Օրինակ . —

$$7815 \text{ դր.} \quad 45 \text{ օր} \quad 6 \text{ 0/0} = 2,406 \times 15 = 36,10$$

$$8988 \text{ »} \quad 135 \text{ »} \quad 6 \text{ 0/0} = 4,494 \times 45 = 202,23$$

ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Դ.

Զանազան երկիրներու մէջ, սնանկութեան սիւնիքներու կազմակերպութեան եղանակը շատ կը տարբերի : Գերմանիոյ մէջ սնանկութեան ներկայացուցիչը կ'անուանուի Առեւտրական դատարանին կողմէ որ կրնայ, եթէ ուզէ, երաշխաւորութիւն մը պահանջել անկէ : Պահանջատէրք, իրենց առաջին նստին մէջ, ուրիշ մը կ'ընտրեն անոր տեղ : Սպանիոյ մէջ երեք սիւնիք կ'ընտրուի մէն մի սնանկութեան համար : Այս պաշտօնը կատարողը պէտք է պահանջատէր ըլլայ կամ պահանջատէրի մը ներկայացուցիչը : Աւստրիոյ մէջ պահանջատէրք կը հրաւիրուին 14 օրուան մէջ ընտրել սիւնիք մը և օգնական մը, որոց ընտրութիւնը կը վաւերացուի դատարանին կողմէ : Պելժիոյ մէջ երբուեալ հաշուեյարդարներու ցուցակը կը պատրաստուի վճռարեկ Ատենի եւ Առեւտրական դատարանի գիտութեամբ : Իսպիոյ մէջ օրէնքն Առեւտրական սենեակներու տուած է հաշուեյարդարներ ընտրելու իրաւունքը : 1883ի Անգլիական Օրինագիրքը մասնաւոր դրութիւն մը հաստատած է : Ըսինք թէ Անգլիոյ մէջ սնանկութիւնն իսկոյն չի վճռուիր, այլ նախապէս դատական գրաւումի մը կ'ենթարկուի պարտականին գոյքը : Արդ, այս վիճակին մէջ, պարտականին գործերու կարգադրութիւնը կը յանձնուի պաշտօնատարի մը : Սնանկութեան վճիռէն ետքն է որ պահանջատէրք, պարզ մեծամասնութեամբ, կ'անուանեն սիւնիք մը (trustee), որուն պաշտօնն է հաշուեյարդարութեան վերջին մասը կատարել : Զուիցերիոյ մէջ, 1889ի օրէնքով, հաշուեյարդարի պաշտօնը կը կատարեն կարգ մը գործակալներ, որք նահանգային ճշմարիտ պաշտօնատարներ են կը նշանակուին իւրաքանչիւր նահանգի ներքին օրէնագրութեան համեմատ : Այս գործակալներ ուղղակի Դանիակցային Խորհուրդին հսկողութեան տակ կը գտնուին :

Պահանջատէրներու ժողովը կրնայ սակայն պահանջել որ սը-
նանկին հաշուեյարդարութիւնն յանձնուի իր ընտրած ան-
ձերուն: Ռումանիոյ մէջ 1895էն ի վեր առեւտրական ամէն
դատարաններու քով կան թագաւորին կողմէ կարգուած
սինսիֆներ որք իբր դատաւոր կը նկատուին: — Դրութեան
այս անհամար տարբերութիւններ ցոյց կուտան թէ սնան-
կութեան սինսիֆներու լաւագոյն կազմակերպութիւն մը գըտ-
նուած չէ տակաւին: Հաշուեյարդարութեան պաշտօնին մէկ
սինսիֆի ձեռքով կատարուիլը — այդ սինսիֆն ըլլա՛յ հան-
րային պաշտօնատար, ըլլայ դատարանի օժանդակ անդամ —
կրնայ աշտուութեան գաղափար մը, յոյս մը ներշնչել սը-
նանկին, մինչ ատկէ ազատ պիտի ըլլար պարտապահանջնե-
րու վարչութիւնը: Բայց ի փոխարէն, արհեստով սինսիֆը,
հաշուական մէթոտները լաւ գիտնալով, աւելի փորձառու-
թեամբ կը վարէ հաշուեյարդարութիւնն և աւելի դիւրու-
թեամբ կը լուծէ սնանկութեան յարակից կնճռոտութիւն-
ները, ինչ որ պարզ մէկը պիտի չկրնար ընել:

2. — Սնանկութեան սինսիֆը միակ գործող մարմինը
չէ հաշուեյարդարութեան մէջ: Ժիւժ ֆովիսքը մ'ալ կայ, որ
պահանջատեարց գումարումներուն կը նախագահէ, սինսիֆին
կարգադրութիւններուն դէմ յարուցուած խնդիրներու մասին
որոշում կուտայ եւ սնանկութեան բոլոր գործողութիւննե-
րուն վրայ կը հսկէ: Բաց աստի, պահանջատէրք կրնան ի-
րենց առաջին կամ երկրորդ գումարման մէջ իրենցմէ երկու
հոգի ընտրել տեւորակները ճշտելու և կացութեան վրայ հա-
շիւ պահանջելու սինսիֆէն: Ասոնց պաշտօնը ճրի է: Սինսիֆն
ամէնէն առաջ պարտաւոր է սնանկին ունեցածները ցուցա-
կադրել: Ցուցակն երկու օրինակ կ'ըլլայ, որոց մին կը յանձ-
նուի դատարանին դիւանատան: Պարտականին վաճառա-
տան կնքումը, որ բացորոշապէս կը հրամայուի սնանկու-
թեան վճռին մէջ, տեղի կ'ունենայ այդ վճռին տրուելէն ան-
միջապէս ետք, բայց ժիւժ ֆովիսքը կրնայ քակել կնիքը,
երբ համոզուի թէ գոյքերու ցուցակագրութիւնը կարելի է
մէկ օրուան մէջ կատարել:

Հ Ի Ի Ս Կ Է Ն Կ Ե Ր Պ Ա Ս Ն Ե Ր Ը

Ե Ի

ՉԱՆՈՆԻ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՆԵՐԸ (Métier)

Գ.

Այժմ կուգայ ձեւացումը կատարող գործիքը, որ կը կոչուի
Abatage = աւսահիչ: Այս ալ տեսակ մը անշարժ արտա-
կեղըն է որ կը բաղկանայ քանի մը մասերէ և յատուկ նե-
ցուկով մը կցուած է դրութեանց յենարանին, այնպէս որ՝
ասեղնակիր անիւր՝ դարձած ատեն՝ օանտրացպիկները՝ ար-
տահրիչին բախելով՝ մի առ մի կուգան կը սահին ասեղներուն
չրթունքին հաւասարութենէն ու կ'երթան դարձեալ տեղա-
ւորուիլ դէպի յատակը: Արդ, սոյն արտահրիչին վրայ ուղ-
ղահայեաց դիրքով դեռուած է նաեւ 5-10 հարիւրորդա-
մէդը տրամագծով անուակ մը, որ շարժական սողնակի մը
միջոցաւ կը նստի ասեղներուն կտուցին վրայ ու անոնց սրա-
ծայր մասերը կը փակէ իրենց տակը գտնուած խոռոչներուն
մէջ, և երբ սանտրացպիկները՝ արտահրիչին բախելով՝ դէպի
դուրս մղուին, նախապէս իրենց առջեւ գտնուած կտիմ-
ները՝ փակուած կտուցներուն վրայէն սահելով՝ կուգան կը
կախուին ասեղներուն շրթունքները գտնուած ալեծածան
թիւքաշներուն մէջ. և ահա կը կատարուի ձեւացումը, այն
է նոր կտիմը: Բայց պէտք է որ այս նոր կտիմներն եր-
թային ասեղներուն յատակը, որպէս զի նոր շրջանին պատ-
րաստուէին. հետեւաբար Պ. Ֆուգէ այսակը ալ գործիք մը
չինամ է, որ դրութեանց յենարանին վրայ հաստատուած ըլ-
լալով՝ կուգայ կը դպի ասեղներէն դէպի վար կախուող հիւս-
ուած կերպասին: Այս գործիք կը բաղկանայ 2 փութատամնա-
ւոր անուակներէ, որոնք յաջորդաբար կը դառնան ու հիւսուած
նոր տողը կը մղեն ասեղներուն յատակը. այս ալ կը կոչուի
Rentreuse = ներխամիչ: Եւ որպէս զի միեւնոյն կահին
վրայ կարելի ըլլայ սահմանաւոր կերպով հաստ կամ բարակ

նիւթեր արտադրել, կտմնող գործիքին վրայ կանոնաւորիչ =
moulinée մը դրուած է, որով կտմնատամներն որոշ քանակու-
թեամբ կը կատարեն թելքաշի գործողութիւնը: Նաև որպէս զի
հիւսուելիք թելը, — որ նախապէս փայտէ դուճի = bobine
վրայ փաթթուած է, — կտմնատամներուն թելքաշին համար
պէտք եղած քանակութեամբ մատակարարուի, ատմնաւոր
անուակներ շինուած են, որոնք թելը դուճէն ստիպողաբար
կը բերեն կտմնիչին ներքեւ, իրենք ալ կանոնաւորիչ լծակ
մ'ունենալով: Ամբողջութիւնը դարձեալ կցուած է գրու-
թեանց յենարանին և կ'անուանուի հայրայրիչ = fournisseuse:
Վերջին լրացուցիչ գործիք մ'ալ կայ, որ կը կոչուի կսմնար-
ձակիչ = decalotteuse, այսինքն արտահրիչին երբեմն ան-
կատար թողած կտիմներն այս գործիքը կը լրացնէ, ասեղ-
ներուն գլուխէն դէպի վար շոյելով: Տափարակ եւ նուրբ
չրթունքով պողովատէ անուակ մ'է որ կը թաւալի ասեղ-
ներուն իր ներքեւէն խոյս տալուն շնորհիւ:

Ուրեմն, եզրակացնենք թէ երբ Պ. Ֆուգէյի հնարած
չրջուն կահը դարցնենք, հիւսուելիք թելը հայրայրիչին մէ-
ջէն անցնելով կը մտնէ կսմնողին ներքեւ, ուր կսմնատամ-
ները զայն կը քաշեն ասեղներուն կեռին մէջ: Ճնշող գործիքը
կը փակէ կտուցները և սանտաղակներն արտահրիչին բախելով
նախորդ կտիմները կ'բերեն քելփառին մէջ: Կսմնարձակիչը
կը մաքրէ և ցերտամղիչը դարձեալ կը գետեղէ յատակը, Ահա
այս հիմնական սկզբունքը մինչև այսօր անփոփոխ կ'մնայ,
ծնունդ տալով ՀԻՒՍԿԷՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ:

Աւելորդ կ'համարինք այս անձուկ էջերուն մէջ մի առ
մի թուելու թէ՛ Պ. Ֆուգէյի գիւտն ո՛րքան ձեռքերէ ան-
ցեր է եւ ո՞ր ժամանակներու մէջ ա՛յս կամ ա՛յն բարեփո-
խութիւններն ու յաւելուածներն ստացեր է: Միայն հիւս-
կէնը մեքենականութեամբ պատրաստելու մասին մեր տուած
այս համառօտ ծանօթութիւններէն վերջ, կը փութանք քա-
նի մը խօսք ընել հիմակուան ստացած կատարելութեանը
վրայ, որ ամէնէն շահեկանն է:

(Շար.)

Մ. ԳԱԼԷՆՏԷՐ

Գ Ի Ն Բ . ZUSORH

12 ԱՐՈՒՇ

Գաւառաց համար՝ իբր բոսի ծախս՝ 3 դրոշ աւելի

ԿԱՆՆԵԻԿԻ ՀԱՄԱՐ 15 % ԶԵՂԶ

Հասցի

ՄԻՄՕՆ ՁԻՕՄԼԷՔՁԵԱՆ

Ի հմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաստանի
Պապր Աշի հասցեի թիւ 23—25 Կ. Պոլիս

Կամ

ԻԶՄԻՏ ՕԻԷՂ, ԹԻԻ 21

Կ. Պոլիս, Էսկի Չապրիէ հասցեի

ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամեն վաճառականի, գրագրի, ուսանողի եւայլն.

12 ԱՐՈՒՇ

معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول
سنه ۳۱۶ تاریخلو رخصتنامه سیله طبع اولنمشدر

«Ազգային գրադարան»



NL0083828

